

	<b>«ԱՄԵՐԻԱԲԱՆԿ» ՓԲԸ</b>	14TRD PL 75-06-01	էջ 1/1
<b>ԱՐԺԵՂԹՂԹԵՐԻ ՇՈՒԿԱՅՈՒՄ ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՄԱԿԱԳՆԵՐԸ</b>		Խմբագրություն 2	
		Ուժի մեջ է՝ 19.09.2019-ից	

**ՄԱԿԱԳՆԱՅԻՆ ՊԼԱՆ «ՀԱՍՏԱՏԱԳՐՎԱԾ»**

<b>1. Արժեթղթերի շուկայում խորհրդատվական ծառայության մատուցման</b>	<i>Սակագին</i>	<i>Ժամանակահատված</i>
<b>Ֆիզիկական և իրավաբանական անձ հաճախորդներ</b>	85000 ՀՀ դրամ	Ամսական

1. Սակագներում ներառված են ԱԱՀ-ը:
2. Սակագնով սահմանված գումարի առաջին վճարման կատարման օրն է պայմանագրի կնքման ամսաթիվը (գանձումը կատարվում է պայմանագրի կնքման պահին), իսկ հաջորդող վճարումների համար վճարման կատարման օր է հանդիսանում յուրաքանչյուր ամսվա համապատասխան ամսաթիվը /կնքման ամսաթվին համապատասխանող ամսաթիվը/ (այսուհետ՝ Վճարման օր), ընդ որում, եթե Վճարման օրը համընկնում է համապատասխան ամսաթիվ չունեցող ամսվան, ապա Վճարման օր է համարվում այդ ամսվա վերջին օրը:
3. Խորհրդատվությունը տրամադրվում է վճարման փաստացի կատարմանը հաջորդող աշխատանքային օրվանից մինչև հաջորդ Վճարման օրը ներառյալ:
4. Սակագնի վճարումը Վճարման օրը չկատարվելու կամ ոչ պատշաճ կատարվելու դեպքում Բանկը կասեցնում է խորհրդատվության տրամադրումը: Խորհրդատվության տրամադրումը վերսկսվում է սակագներով սահմանված ժամկետներում և կարգով՝ ամսական սակագինն ամբողջությամբ վճարվելու դեպքում: Բանկն իրավունք ունի մինչև վճարման պատշաճ կատարումը դադարեցնել Պայմանագիրը, եթե կասեցման ժամանակահատվածը տևում է երեք ամսից ավելի:
5. Հաճախորդի բանկային հաշվին բավարար դրամական միջոցներ լինելու պարագայում Բանկին վճարվելիք գումարները Բանկի կողմից անակցեպտ կարգով (առանց Հաճախորդի լրացուցիչ համաձայնության) գանձվում են Հաճախորդի բանկային հաշվից, որի համար Հաճախորդը, սակագնային փաթեթն ընտրելով և ստորագրելով պայմանագիրը, տալիս է իր համաձայնությունն ու հանձնարարականը:
6. Խորհրդատվական ծառայությունը տրամադրվում է միայն «Ամերիաբանկ» ՓԲԸ –ի բրոքերային ծառայության հաճախորդներին: